

Արձանագրություն Ռեստորանների, Գարեջրատների Ու Գինետների Համար. Հավելված I

Վերջին Թարմացումները. (Փոփոխությունները նշված են դեղին գույնով)
12/11/20.

- Ռեստորաններում, գարեջրատներում ու գինետներում ժամանակավոր բացօթյա նստատեղերը փակվում են հանրության համար:
- Աշխատակիցները պետք է մշտապես կրեն դեմքի ծածկոց, բացառությամբ ուտելու կամ խմելու ժամանակ: Աշխատակիցները կարող են ուտել կամ խմել միայն ընդմիջման ժամերին և հատուկ նախատեսված տարածքներում՝ նախընտրելի է դրսում: Ուտելիս կամ խմելիս աշխատակիցները մյուսներից պետք է 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն պահպանեն:

11/25/20. Ռեստորանները, գարեջրատները ու գինետները կարող են սնունդ ու ըմպելիքներ առաջարկել միայն սնունդը տանելու (take-out), մեքենայով անցնել վերցնելու (drive thru) կամ առաքման դեպքում: Գինետներն ու գարեջրատները կարող են շարունակել մանրածախ վաճառքի գործառնությունները: Այս սահմանափակումներն ուժի մեջ են 2020 թ.-ի նոյեմբերի 25-ից մինչև հետագա ծանուցում:

11/10/20. Աշխատողները ընդգրկվում և աջակցում են որպես հավասարակից ուսուցիչներ՝ ուժեղացնելու ֆիզիկական հեռավորության պահպանման և վարակի վերահսկման վերաբերյալ հրահանգները:

Նոր Կորոնավիրուսի (COVID-19) տարածման, դեպքերի և հոսպիտալացումների արագ աճող թվի և մեր համայնքի առավել խոցելի անդամներին պաշտպանելու անհրաժեշտության պատճառով այս արձանագրությունը թարմացվել է՝ սահմանափակելու ռեստորանների և սննդի այլ հաստատությունների գործունեությունը՝ թույլ տալով սնունդ կամ ըմպելիքներ տրամադրելու այլ տարբերակներ, ինչպիսին են առաքումը, մեքենայով անցնել վերցնելը, կամ սնունդը տանելը: **Արգելվում է սննդի, ըմպելիքների ու/կամ ալկոհոլի մատուցման ցանկացած ծառայություն, որը ենթադրում է հաճախորդի ներսում նստելը կամ ներսի ու դրսի տարածքում մնալը՝ ուտելիք կամ խմիչք օգտագործելու համար:** Ռեստորաններում, գարեջրատներում և գինետներում ժամանակավոր բացօթյա նստատեղերը փակվում են հանրության համար: Հասարակական կառույցները չպետք է ժամանակավոր սեղաններ և աթոռներ տեղադրեն այնպիսի վայրերում կամ տարածքներում, որոնք հարմար կլինեն կամ կխրախուսեն բացօթյա ճաշը ընտանիքի անդամ չհանդիսացողների շրջանում, քանի որ դա ստեղծում է **նմանատիպ** վտանգ, ինչպես **ռեստորաններում** բացօթյա ճաշելը: Ի հավելում Նահանգի Հանրային Առողջապահության Պատասխանատուի կողմից ռեստորանների, գարեջրատների և գինետների համար կիրառվող պայմանների՝ ռեստորանները, գարեջրատները և գինետները պետք է համապատասխանեն նաև աշխատողների անվտանգության և վարակների վերահսկման այս արձանագրություններին:

Գինետները, որոնք արտադրում են իրենց սեփական գինին՝ գինու համտեսման համար առանձնացված տարածքներով, որոնք Կալիֆոռնիայի Առողջապահության և Անվտանգության Օրենսգրքի 113789 (գ) (5) հոդվածով չեն հանդիսանում սննդի տրամադրման հաստատություն, և նրանց գործունեության համար չի պահանջվում առողջապահական թույլտվություն, կարող են բացվել մանրածախ առևտրի համար և պետք է համապատասխանեն աշխատողների անվտանգության և վարակի վերահսկման պահանջներին, որոնք առկա են այս արձանագրության և Անհատական Գնումների Համար Նախատեսված Մանրածախ Հաստատությունների Բացման Արձանագրություններում (Հավելված Բ):

Այն Հաստատությունները, որոնք Առողջապահության Հրամանով և սույն Արձանագրությամբ լիազորված չեն վերաբացվելու, պետք է շարունակեն մնալ փակ :

Սույն արձանագրությունը նախատեսված չէ համերգների, ներկայացումների կամ ժամանցի վայրերի համար, որոնք տեղում սննդի հաստատություններ ունեն: Սննդի այս հաստատությունները պետք է շարունակեն մնալ փակ, մինչև որ նրանց թույլ տրվի վերաձևավորվել կամ լրիվ գործունեություն ձեռնարկել՝ հատուկ վերաբացման կարգի միջոցով:

Այս արձանագրությունը նախատեսված չէ սննդամթերք վաճառողների (օրինակ՝ սննդի բեռնատարների կամ սննդի սալակների) համար: Տե՛ս [Սննդամթերքի Փողոցային Վաճառքով Զբաղվողների Ուղեցույցը](#) սննդի այս հաստատություններին վերաբերող պահանջների համար:

Խնդրում ենք նկատի ունենալ: Այս փաստաթուղթը կարող է թարմացվել լրացուցիչ տեղեկությունների կամ ռեսուրսների հասանելի դառնալու դեպքում, այնպես որ անպայման կանոնավոր կերպով ստուգեք Լոս Անջելեսի Շրջանի վեբ կայքը՝ <http://www.ph.lacounty.gov/media/Coronavirus/> սույն փաստաթղթի և առնչվող ուղեցույցի ցանկացած թարմացմանը ծանոթանալու համար:

Այս ստուգաթերթը ներառում է.

- (1) Աշխատավայրի գործունեության ծրագրեր ու գործելակերպ՝ աշխատողների առողջությունը պաշտպանելու համար
- (2) Ֆիզիկական հեռավորությունն ապահովելու միջոցառումներ
- (3) Վարակի վերահսկումն ապահովելու միջոցառումներ
- (4) Աշխատակիցների կամ հանրության հետ հաղորդակցություն
- (5) Կարևոր ծառայություններին անաչառ հասանելիության ապահովման միջոցառումներ:

Ձեր հաստատության վերաբացման ցանկացած արձանագրություն մշակելիս պետք է հաշվի առնել հետևյալ հիմնգ հիմնական ոլորտները:

Բոլոր ռեստորանները, գարեջրատներն ու զինետները, որոնց անդրադարձ է կատարվում է այս արձանագրության մեջ, պետք է իրագործեն ստորև նշված բոլոր կիրառելի միջոցառումները ու պատրաստ լինեն բացատրելու, թե ինչու չիրականացված որևէ միջոցառում կիրառելի չէ տվյալ ձեռնարկության համար:

Ձեռնարկության անունը՝ _____

Հաստատության հասցեն՝ _____

Նախկինում _____

Առավելագույն Զբաղվածությունը՝ _____

Հրապարակման Ամսաթիվը՝ _____

A. ԱՇԽԱՏԱՎԱՅՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ ՈՒ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊ՝ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ՆՇԵԼ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌԵԼԻ ԲՈԼՈՐ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ)

- ❑ Բոլոր անձանց, որոնք կարող են իրենց աշխատանքային պարտականությունները կատարել տնից, պետք է հանձնարարել աշխատել տնից:
- ❑ Խոցելի անձնակազմին (65 տարեկանից բարձր անձինք, հղիները և քրոնիկական առողջական խնդիրներ ունեցողները) պետք է հանձնարարել այնպիսի աշխատանք, որը հնարավորության դեպքում կարելի է կատարել տնից, և նրանք պետք է քննարկեն ցանկացած մտահոգություն իրենց բժշկի կամ մասնագիտացված առողջապահական ծառայությունների տրամադրողների հետ՝ աշխատավայր վերադառնալու վերաբերյալ համապատասխան որոշումներ կայացնելու համար:
- ❑ Բոլոր աշխատակիցներին պետք է կարգադրվի, որպեսզի հիվանդ լինելու կամ COVID-19-ով վարակված անձի հետ շփում ունենալու դեպքում չգան աշխատանքի:
- ❑ Աշխատակիցներին տրամադրվում է տեղեկատվություն գործատուի կամ կառավարության կողմից հովանավորվող արձակուրդի նպաստների մասին, որոնցից աշխատակիցը հնարավորության դեպքում իրավունք կունենա օգտվելու, ինչը ֆինանսապես ավելի կհեշտացնի վերջինիս տանը մնալը: Լրացուցիչ տեղեկությունները տե՛ս [հիվանդության հիմքով տրամադրվող արձակուրդին և COVID-19-ով պայմանավորված աշխատողի փոխհատուցմանը օժանդակող պետական ծրագրեր](#)-ում՝ ներառյալ աշխատակցի՝ հիվանդության արձակուրդի վերաբերյալ իրավունքները՝ համաձայն [Ընտանիքների Կորոնավիրուսի Առաջին Արձագանքման Ակտի](#) և COVID-19-ով վարակման արդյունքում աշխատանքային գործունեությանն առնչվող նպաստներից օգտվելու աշխատակցի իրավունքները՝ համաձայն Նահագապետի [N-62-20 Գործադիր Հրաման](#) -ի:
- ❑ Տեղեկանալով, որ մեկ կամ մի քանի աշխատակիցների թեստի պատասխանը դրական է, կամ նրանք ունեն ախտանիշներ, որոնք համահունչ են COVID-19-ին, (դեպք), գործատուն պետք է ունենա ծրագիր կամ արձանագրություն, որպեսզի այդ անձր/դեպքը (դեպքերը) մեկուսանա(ն) տանը, և աշխատավայրում վարակված անձի/դեպքի (դեպքերի) հետ շփում ունեցած բոլոր աշխատակիցներից պահանջի անհապաղ ինքնակարանտին պահպանել: Գործատուի ծրագիրը պետք է կարանտինի մեջ գտնվող բոլոր աշխատակիցների համար նախատեսի արձանագրություն, որը կապահովի հասանելիություն COVID-19-ին կամ COVID-19-ի թեստավորմանը՝ որոշելու , թե արդյոք աշխատավայրում տեղի են ունեցել վարակման լրացուցիչ դեպքեր, ինչը կարող է պահանջել COVID-19-ի հսկողության լրացուցիչ միջոցառումների իրականացում:
- ❑ Այն դեպքում, երբ սեփականատերը, ղեկավարը կամ օպերատորը 14 օրվա ընթացքում իմանում է աշխատավայրում COVID-19-ով վարակման երեք կամ ավելի դեպքերի մասին, գործատուն պետք է այդ բռնկման մասին հաղորդի Հանրային Առողջապահության Վարչություն հետևյալ հեռախոսահամարներով՝ (888) 397-3993 կամ (213) 240-7821: Եթե աշխատավայրում հայտնաբերվում է վարակման խմբակային դեպք, ապա Հանրային Առողջապահության Վարչությունը կնախաձեռնի պատասխան արձագանք, որը ներառելու է վարակների վերահսկման ուղեցույցների և առաջարկությունների տրամադրում, տեխնիկական աջակցություն և տեղանքին հատուկ վերահսկման միջոցառումների իրականացում: Հանրային առողջապահության գործերի կառավարչին կհանձնարարվի խմբակային դեպքի քննությունը՝ օգնելու ուղղորդել հաստատության արձագանքը: Հանրային Առողջապահության Վարչությանն անհրաժեշտ կլինի հաստատության հետ անմիջական համագործակցություն որոշելու՝ արդյոք խմբակային դեպքը կարող է COVID-19-ի բռնկում առաջացնել:
- ❑ [Աշխատակիցների ստուգումներ](#) պետք է իրականացվեն նախքան աշխատակիցների կողմից հաստատություն մուտք գործելը: Ստուգումները պետք է ներառեն հազի, շնչարգելության, դժվարացած

Հնչառության և ջերմության կամ դողի ստուգում, և պարզաբանում այն մասին, թե արդյոք այդ պահին անձին կարգադրված է մեկուսանալ կամ կարանտին պահպանել: Այդ ստուգումները կարող են իրականացվել հեռակա կարգով կամ անձամբ՝ աշխատակցի ժամանման պահին: Հնարավորության դեպքում աշխատավայրում պետք է կատարվի նաև ջերմաչափում:

- ❑ Այլ անձանց հետ շփում ունեցող աշխատակիցներին պետք է անվճար առաջակվի դեմքի համապատասխան ծածկոց, որը ծածկում է քիթը և բերանը: Աշխատակիցը պարտավոր է ամբողջ աշխատանքային օրվա ընթացքում կրել դեմքի ծածկոցը, երբ շփվում է կամ հնարավոր է շփում ունենա այլոց հետ: Այն աշխատակիցները, որոնց բժիշկը խորհուրդ է տվել չկրել դեմքի ծածկոց, պետք է կրեն դեմքի վահան՝ ստորին հատվածում ամրացված կտորով, որպեսզի համապատասխանեն Նահանգի հրահանգներին, քանի դեռ նրանց կարգավիճակը դա թույլ է տալիս: Նախընտրելի են կզակը ծածկող կտորով դեմքի վահանները: Միակողմանի փականով դիմակներ չպետք է կիրառվեն: Աշխատակիցները պարտավոր չեն դեմքի ծածկոց կրել, երբ իրենց անձնական գրասենյակում մենակ են կամ գտնվում են ամուր միջոտրմով խցիկում, որի բարձրությունը գերազանցում է աշխատողի հասակը կանգնած վիճակում:
- ❑ Համաձայն ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻ ՀՐԱՄԱՆԻ՝ COVID-19-Ի ՎԵՐԱՀՄԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՐԳ 1 ՆՇԱՆԱԿԱԼԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ, որը տրվել է 2020թ. -ի Նոյեմբերի 28-ին, բոլոր աշխատակիցները և ձեռնարկության հաճախորդները պետք է մշտապես դեմքի ծածկոցներ կրեն:
- ❑ Աշխատակիցներին պետք է կարգադրել պատշաճ կերպով կրել դիմակները՝ ներառյալ այդ դիմակների ամեն օր լվանալու և փոխարինելու անհրաժեշտությունը:
- ❑ Դիմակների հետևողական և ճշգրիտ կիրառումն ապահովելու համար աշխատակիցներին չի խրախուսվում ուտել կամ խմել՝ բացառությամբ իրենց ընդմիջումներին, երբ նրանք կարող են անվտանգ կերպով հանել իրենց դիմակները և մյուսներից ֆիզիկական հեռավորություն պահպանել: Ուտելիս կամ խմելիս աշխատակիցները պետք է մյուսներից առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն պահպանեն: Նախընտրելի է ուտել կամ խմել դրսում և հնարավորության դեպքում մյուսներից հեռու:
- ❑ Զբաղվածությունը կրճատվում է, և աշխատողների միջև տարածությունն առավելագույնի է հասցվում ցանկացած սենյակում կամ տարածքում, որն աշխատակիցներն օգտագործում են ճաշելու և/կամ ընդմիջումների համար: Այս պահանջին հնարավոր է հասնել հետևյալ կերպ.
 - Նշել առավելագույն զբաղվածությունը, որը համապատասխանում է ընդմիջումների համար օգտագործվող սենյակներում կամ տարածքներում առնվազն վեց ոտնաչափ հեռավորության ապահովմանը և
 - Փոփոխել ընդմիջումների կամ ճաշի ժամերը՝ ճաշերի և ընդմիջումների համար օգտագործվող սենյակներում կամ տարածքներում զբաղվածության թիվը նվազեցնելու համար, և
 - Սեղանները դնել վեց ոտնաչափ հեռավորության վրա և ապահովել նստատեղերի միջև վեց ոտնաչափ հեռավորությունը, նստատեղերը հեռացնել կամ ժապավեններ կպցնել՝ զբաղվածությունը նվազեցնելու համար, հատակների վրա գծանշումներ դնել՝ հեռավորությունն ապահովելու համար, և նստատեղերը դասավորել այնպես, որ նվազագույնի հասցվի դեմ առ դեմ շփումը: Միջնապատերի օգտագործումը խրախուսվում է՝ տարածման հետագա կանխարգելման համար, բայց այն չպետք է համարվի զբաղվածության կրճատմանը և ֆիզիկական հեռավորության պահպանմանը փոխարինող միջոց:
- ❑ Դեմքի վահանները պետք է օգտագործել, մաքրել և ախտահանել՝ ըստ արտադրողի ցուցումների:
- ❑ Աշխատակիցներին պետք է կարգադրել պահպանել ձեռքերի հիգիենան՝ ներառյալ ձեռքերի լվացման հաճախականությունը, ձեռքերի ախտահանման միջոցի և ձեռնոցի պատշաճ օգտագործումը:
- ❑ Աշխատակիցներին անհրաժեշտ է տրամադրել ժամանակ ձեռքերը հաճախ լվանալու համար:

- ❑ Սննդի հաստատությունները, որոնք առաջարկում են սնունդը տանելու կամ առաքման ծառայություններ, պետք է ապահովեն ֆիզիկական հեռավորության պահպանումը՝ հերթում կանգնած պատվիրող կամ ստացող հաճախորդների միջև:
- ❑ Տարածքում բացօթյա նստատեղերը փակ են:
 - Բարերի վաճառատեղանները, որոնք օգտագործվում էին ակոնոլային խմիչքներ պատրաստելու կամ մատուցելու համար, փակ են՝ վաճառատեղանի մոտ սննդի և ըմպելիքների սպասարկման համար:
 - Արգելվում է սննդի, ըմպելիքների և/կամ ակոնոլի ցանկացած ծառայություն, որը ենթադրում է հաճախորդի ներսում կամ դրսում նստելը՝ ուտելիք, ըմպելիք կամ ակոնոլ օգտագործելու համար:
 - Արգելվում է ներսում կամ դրսում՝ ճաշելու տարածքում նստելը:
 - Արգելվում են ժամանցային գործողությունները: Սա ներառում է, բայց չի սահմանափակվում, Disk Jockey և կենդանի երաժշտություն և զվարճանքներ: Երաժշտության ձայնը կարգավորել այնպես, որ աշխատողները պատվերները լսելիս կարողանան պահպանել հեռավորություն հաճախորդներից:
 - Ռեստորանները չեն կարող ընդունելություններ, բանկետներ կամ այլ մեծ հավաքույթներ կազմակերպել:
- ❑ Ռեստորանները կարող են շարունակել բաց լինել՝ առաքման, սնունդը տանելու և մեքենայով անցնել վերցնելու ծառայությունների համար:
- ❑ Հնարավորության դեպքում, պետք է կիրառվեն տեխնոլոգիական լուծումներ անձանց միջև ֆիզիկական շփումը նվազեցնելու համար՝ բջջային տարբերակով պատվերներ և ճաշացանկ պարունակող պլանշետներ, առանց հպման վճարման տարբերակներ:
- ❑ Ձևավորել հաճախորդների, առաքման վարորդների և աշխատակիցների միջև փոխգործակցություն՝ ֆիզիկական հեռավորություն ապահովելու համար:
 - Ռեստորանի ներսում և ռեստորանից դուրս գտնվող տարածքներում, որտեղ հաճախորդները, առաքման վարորդները կամ այլոք կարող են սպասել, հատակը պետք է գծանշված լինի համապատասխան նշաններով՝ ֆիզիկական հեռավորություն պահպանելը հնարավոր դարձնելու և ապահովելու համար:
 - Պետք է իրականացվեն հյուրերի անշփում գործընթացներ և կիրառվեն տարբեր էլեկտրոնային համակարգեր՝ սնունդը վերցնելու և առաքումը կազմակերպելու համար, որտեղ հնարավոր է:
 - Հնարավորության դեպքում աշխատակիցների և հաճախորդների միջև շփումը պետք է սահմանափակվի առավելագույնը հինգ րոպեով:
- ❑ Եթե հաստատությունը հնարավորություն ունի և առաջարկում է տեղում պատվեր կատարելու ծառայություն, հաճախորդներին պետք է առաջարկվի ճաշացանկ (փակցված տարբերակով կամ մեկանգամյա օգտագործման տեսքով), որպեսզի պատվեր կատարելու գործընթացը ավելի հեշտ դառնա, և հաճախորդը պետք է հավաքի, փաթեթավորի և վերցնի իր պատվերը հնարավորինս շուտ: Հաճախորդներին պետք է տեղեկացնել պատվերը վերցնելու մոտավոր ժամանակի մասին: Պատվերին սպասող հաճախորդները չեն կարող հավաքվել հաստատության ներսում: Նրանք պետք է կամ մնան մեքենայի մեջ, կամ վերադառնան համապատասխան ժամին՝ պատվերը վերցնելու համար:
- ❑ Սահմանափակ շփում անձնակազմի և հաճախորդների միջև:
 - Տեղադրեք ֆիզիկական պատնեշներ՝ ինչպիսիք են միջնապատերը կամ թափանցիկ ապակիները դրամարկղներում, սպասելու համար նախատեսված հենարաններում, պատվերների սեղանների մոտ և այլն, որտեղ վեց ոտնաչափ ֆիզիկական հեռավորության պահպանումը դժվար է:

- ❑ Թույլ մի՛ տվեք աշխատակիցներին և հաճախորդներին հավաքվել մեծ կուտակումներով վայրերում՝ ինչպիսիք են պետքարանները, միջանցքները, բարերը, ամրագրում կատարելու տարածքները և վարկային քարտերի տերմինալները և այլն:
 - Պահանջեք աշխատակիցներից խուսափել ձեռքսեղմումներից և ողջույնի նմանատիպ տարբերակներից, որոնք խախտում են ֆիզիկական հեռավորությունը:
- ❑ Օգտագործեք պատնեշներ կամ ընդլայնեք սեղանների/աթոռների միջև հեռավորությունը՝ աշխատողների ընդմիջման սենյակներում աշխատողներին իրարից առանձնացնելու համար: Հնարավորության դեպքում ստեղծեք բացօթյա ընդմիջման տարածքներ ստվերային ծածկերով և նստատեղերով, որոնք կապահովեն ֆիզիկական հեռավորություն:
- ❑ Հնարավորության դեպքում հաստատության գործողությունները պետք է վերաձևավորվեն՝ աշխատողների միջև ֆիզիկական հեռավորության պահպանմանը հասնելու համար:
 - Խոհանոցի և շենքի ետնամասում գտնվող մյուս տարածքների հատակը պետք է գծանշված լինի համապատասխան նշաններով՝ ֆիզիկական հեռավորության պահանջները ապահովելու համար:
- ❑ Ֆիզիկական հեռավորության պահպանման արձանագրությունները պետք է կիրառվեն յուրաքանչյուր գրասենյակային տարածքում, խոհանոցներում, մառաններում, սառնարանային սենյակներում, կամ աշխատողների բարձր կուտակումով այլ տարածքներում:
 - Հնարավոր է տեղի ունենա պատահական շփում, սակայն նպատակն է սահմանափակել այդ շփումը 15 րոպեից պակաս ժամանակով՝ նախընտրելի է 10 րոպե, և աշխատակիցները պետք է մշտապես կրեն իրենց դեմքի ծածկոցները:

C. ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱՀՄԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՆԱԽՔԱՆ ԲԱՑՎԵԼԸ

- ❑ HVAC համակարգը պետք է լինի լավ, գործող վիճակում. օդափոխությունը պետք է ավելացվի հնարավորինս առավելագույն չափով:
 - Դիտարկեք շարժական և բարձր արդյունավետությամբ օդը մաքրող սարքերի տեղադրումը, ոպեսզի շենքի օդային զտիչները հասնեն հնարավորինս բարձր արդյունավետության և կատարեք ուրիշ փոփոխություններ՝ աշխատանքային բոլոր տարածքներում արտաքին օդի և օդափոխության քանակի ավելացման համար:
- ❑ Զգործարկված հաստատությունների դեպքում տաք և սառը ջրի ծորանները հոսեցրեք հինգ րոպե տևողությամբ՝ վերաբացումից առաջ, որպեսզի հնացած ջուրը փոխարինվի թարմ և անվտանգ ջրամատակարարմամբ:
- ❑ Հաստատությունը պետք է մանրակրկիտ մաքրվի և ախտահանվի/վարակազերծվի (օգտագործելով COVID-19-ի դեմ օգտագործման համար հաստատված ապրանքներ), հատկապես, եթե այն փակ է եղել:
 - Մաքրման մեծ պահանջի դեպքում իրականացրեք գործողություններ՝ դիմելու մաքրման ծառայություն իրականացնող երրորդ կողմի օգնությանը:
- ❑ Այնպիսի տարածքներ՝ ինչպիսիք են ճաշասենյակները, սպասելու համար նախատեսված հենարանները և խոհանոցները, պետք է հագեցված լինեն պատշաճ սանիտարական միջոցներով՝ ներառյալ ձեռքի ախտահանիչ և ախտահանող անձեռոցիկներ բոլոր աշխատակիցների համար, ովքեր ուղղակիորեն օգնում են հաճախորդներին:

- Ապահովեք սանիտարական հաստատությունների մշտական շահագործումը և անհրաժեշտ պարագաներով պահեստավորված լինելը, անհրաժեշտության դեպքում տրամադրել լրացուցիչ օճառ, թղթե սրբիչներ և ձեռքի ախտահանող միջոց:
 - Խորհուրդ տվեք տեղադրել առանց հպման ցողիչներ՝ ձեռքի ախտահանիչ միջոցների, օճառի, թղթե սրբիչի և աղբարկղի համար:
- Պատվերների հանձման վայրերը սահմանված են այնպես, որ առաքումները փոխանցվեն խցանումներից հեռու վայրում: Ապրանքների առաքման համար, հնարավորության դեպքում, պետք է վերացնել ֆիզիկական շփումը:

ՄԱՆԴԱՍԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

- Պետք է իրականացվեն և պահպանվեն Կալիֆոռնիայի Սննդի Մանրածախ Առևտրի Օրենքով (CRFC) սահմանված սննդամթերքի անվտանգությանը վերաբերող բոլոր գործողությունները:
- Տաք սնունդը պահեք տաք (135 ° F կամ ավելի բարձր), իսկ սառը սնունդը՝ սառը (41 ° F կամ ցածր) պայմաններում:
 - Մանրակրկիտ եփեք կերակուրները՝ ինչպես պահանջվում է CRFC-ում:
 - Մաքրեք և ախտահանեք սպասքն ու սարքավորումները CRFC-ով սահմանված պահանջվող հաճախականությամբ:
 - Պահպանեք աշխատողների առողջության և հիգիենայի պրակտիկան. մի աշխատեք, երբ հիվանդ եք. հաճախակի լվացեք ձեռքերը. օգտագործեք ձեռնոցներ՝ ինչպես պահանջվում է CRFC-ում:
 - Համոզվեք, որ ամբողջ սնունդն ու սննդի բաղադրիչները սննդի հաստատված աղբյուրից են:
 - Սննդամթերք պատրաստող աշխատակիցներին չի խրախուսվում հերթափոխի ընթացքում փոխել կամ մուտք գործել ուրիշների աշխատանքային կայաններ:
- Ինքնասպասարկման մեքենաները, ինչպիսիք են գազավորված ըմպելիքների և սառեցված յոգուրտի/պաղպաղակի մեքենաները, օգտագործվում են սննդի աշխատակցի կողմից, և **հպման ենթարկվող մակերեսները ամենժամյա հիմքով** մաքրվում և ախտահանվում են:
- Այն վայրերը, որտեղ հաճախորդները կարող են հավաքվել կամ դիպչել սննդամթերքին կամ պարագաներին, որոնք կարող են օգտագործվել նաև մյուս հաճախորդների կողմից, պետք է փակվեն: Այդպիսի իրերը հաճախորդներին տրամադրվում են անհատապես, և յուրաքանչյուր օգտագործումից հետո, ըստ անհրաժեշտության, դեն նետվում կամ մաքրվում և ախտահանվում են: Սա ներառում է, բայց չի սահմանափակվում.
- Ինքնասպասարկման տարածքները՝ համեմունքների տարաներով, սպասքի տուփերով, անձեռոցիկներով, կափարիչներով, ձողիկներով, ուտելիքը տանելու տարաներով և այլն:
 - Ինքնասպասարկման սննդի տարածքները՝ ինչպիսիք են սալսա բարերը, աղցանների բարերը կամ բուֆետային ոճը, ներառյալ սննդի համատեսումը:
 - Ուտելուց հետո անանուխի կոնֆետները, նախուտեստները կամ հաճախորդների համար նախատեսված ատամնափայտիկները: Դրանք առաջարկվում են վճարման ժամանակ, կամ տրամադրվում են միայն ըստ պահանջի:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

- Պետքարանները, որոնք նախկինում բաց էին հանրության համար, պետք է շարունակեն մնան բաց հանրության համար:
- Յուրաքանչյուր հերթափոխի սննդի աշխատակցին պետք է հանձնարարվի վերահսկելու և կիրառելու լրացուցիչ մաքրման և ախտահանման ընթացակարգեր՝ ըստ անհրաժեշտության:

- Մշակվել և իրականացվում է հաճախակի հպման մակերեսների և մուտքի տարածքների մաքրման և ախտահանման ծրագիր:
 - Ընդհանուր տարածքները և հաճախակի հպման առարկաները՝ կապված հաճախորդների տեղափոխման և վճարման հետ(օրինակ՝ սեղաններ, դռան բռնակներ կամ բռնակներ, վարկային քարտերի ընթերցիչներ) աշխատանքային ժամերին վարակազերծվում են EPA-ի կողմից հաստատված ախտահանող միջոցներով:
 - Բոլոր վճարային պորտալները, գրիչները և ստիլուսները **ամենժամյա հիմքով** ախտահանվում են:
- Ամեն գիշեր հաստատությունը մանրակրկիտ մաքրվում և ախտահանվում/վարակազերծվում է (օգտագործելով COVID-19-ի դեմ օգտագործման համար հաստատված ապրանքներ): Պահվում է գրանցումների գիրք՝ հնարավորության սահմանում գործողության կատարումը վերահսկելու համար:
- Աուդիո ակնջակալները և այլ սարքավորումները միապին չեն օգտագործվում տարբեր աշխատողների միջև, քանի դեռ սարքավորումը պատշաճ կերպով ախտահանված չէ յուրաքանչյուր օգտագործումից հետո: Խորհրդակցել սարքավորումների արտադրողների հետ՝ ախտահանման համապատասխան քայլեր որոշելու համար:
- Սպասք լվացողները, որոնք լվանում են բազմակի օգտագործման հաճախորդների սպասքը, ապահովված են սարքավորումներով, որպեսզի պաշտպանեն իրենց աչքերը, քիթը և բերանը աղտոտումից՝ դեմքի ծածկոցների, պաշտպանիչ ակնոցների և/կամ դեմքի վահանների համադրությամբ: Սպասք լվացողներին տրամադրվում են անթափանց զոզնոցներ, և պահանջվում՝ դրանք փոխել հաճախակի: Բազմակի օգտագործման պաշտպանիչ սարքավորումները, ինչպիսիք են դեմքի վահաններն ու ակնոցները, պետք է պատշաճ կերպով ախտահանվեն յուրաքանչյուր օգտագործումից առաջ և հետո:
- Պետքարանները պարբերաբար ստուգվում են և ամեն ժամ մաքրվում և ախտահանվում են՝ օգտագործելով EPA -ի կողմից հաստատված ախտահանիչներ:
- Ձեռքերի ախտահանիչ միջոցներն ու աղբամանները հանրության համար հասանելի են հաստատության մուտքի մոտ կամ դրա մոտակայքում:

ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

- Հաճախորդները պետք է մուտք գործեն լրիվ բաց դռներով (սա պետք է գնահատվի վնասատուների-կրծողների ընդհանուր ազդեցության թույլատրման համար), կամ հնարավորինս ավտոմատացված: Ձեռքերի ախտահանման միջոցը պետք է հասանելի լինի այն հյուրերի համար, ովքեր պետք է դիպչեն դռան բռնակներին:
- Հաճախորդներին պետք է հանձնարարել, որպեսզի նրանք կրեն դեմքի կտորե ծածկոցներ՝ հաստատություն մուտք գործելիս, հաստատության ցանկացած վայրում քայլելիս և սանհանգույցներից օգտվելիս: Մա վերաբերվում է բոլոր մեծահասակներին և 2 տարեկանից բարձր երեխաներին: Այս պահանջից ազատվում են միայն այն անձինք, ովքեր ունեն քրոնիկ շնչառական խնդիրներ կամ այլ բժշկական խնդիրներ, որոնք վտանգավոր են դարձնում դեմքի ծածկոց կրելը: Ձեր աշխատողների և այլ այցելուների անվտանգությունն ապահովելու համար պետք է դեմքի ծածկոցը հասանելի դարձնել այն այցելուների համար, ովքեր առանց դրա են ժամանում:
 - Այն հաճախորդները, որոնք հրաժարվում են դեմքի կտորե ծածկոցներ կրել, կարող են մերժվել սպասարկվելուց և պահանջվել, որ հեռանան:
- Երեխաների հետ ժամանող հաճախորդները պետք է ապահովվեն, որ իրենց երեխաները մնան ծնողի կողքին, խուսափեն որևէ այլ անձի կամ իրենց չպատկանող իրի դիպչելուց, կրեն դեմքի ծածկոցներ, եթե տարիքը թույլ է տալիս:
- Ախտանիշների ստուգումն իրականացվում է նախքան այցելուները կարող են մուտք գործել

հաստատություն: Ստուգումները պետք է ներառեն ` կապված հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության և ջերմության կամ դողի ստուգում **և պարզաբանում այն մասին, թե արդյոք անձը տվյալ պահին կատարում է մեկուսացման կամ կարանտին պահպանելու հրահանգներ:** Այս ստուգումները կարելի է անել անձամբ կամ այլընտրանքային տարբերակների միջոցով` ինչպիսիք են առցանց ստուգումը համակարգերով, կամ էլ հաստատության մուտքի մոտ փակցված [ցուցանակների](#) միջոցով, որոնց վրա նշվում են, որ տվյալ ախտանիշներն ունեցող այցելուները չպետք է մուտք գործեն տվյալ տարածք:

- Այն աշխատակիցները, որոնք տեղափոխում են հաճախորդների կողմից օգտագործվող իրերը կամ աղբի տոպրակները, պետք է օգտագործեն մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ (ձեռքերը լվանում են ձեռնոցներ դնելուց և դրանք հանելուց հետո), և պետք է տրամադրվեն նաև գոգնոցներ, որոնց փոխելը պետք է կատարվի հաճախակի :
- Բազմակի օգտագործման ընտրացանկերը-մենյուները մաքրվում և ախտահանվում են հաճախորդների կողմից յուրաքանչյուր օգտագործումից առաջ և հետո: Եթե օգտագործում են թղթե ընտրացանկեր, նետեք յուրաքանչյուր հաճախորդի օգտագործումից հետո: Պետք է հաշվի առնել այլընտրանքային տարբերակները` ինչպիսիք են ստացիոնար ընտրացանկի տախտակները, էլեկտրոնային ընտրացանկերը, կամ մոբիլային սարքը ներբեռնելու ցանկերը:
- Խրախուսվում են ոչ կանխիկ գործարքները: Եթե ընդունելի է սննդամթերքի հաստատության համար, հաճախորդներին հնարավորություն է ընձեռնվում սահեցնել իրենց վարկային/դեբիտ քարտերը, իսկ քարտերի ընթերցիչները ամբողջությամբ ախտահանվում են **ամենժամյա հիմքով:**
- Ընտրովի - Նկարագրել այլ միջոցառումներ (օրինակ ` միայն տարեցների համար ժամեր տրամադրելը, ոչ պիկ ժամերին վաճառքի խթանումը)։

D. ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՂՈՂԴԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Սույն Արձանագրության **կամ COVID-ի Համապատասխանության Վկայագրի** կրկնօրինակը պետք է փակցված լինի հաստատության բոլոր հանրային մուտքերում:
- Բոլոր մուտքերում նաև փակցված է նշան, որը տեղեկացնում է հաճախորդներին օգտագործել ձեռքի ախտահանիչ միջոց և կրել դեմքի ծածկոց, երբ նրանք չեն ուսում կամ չեն խմում:
- Այլ ձեռնարկության ներսում, փակ կամ բաց առևտրի կենտրոնի, կամ էլ մոլի ներսում տեղակայված **ռեստորանների համար փակցվում է ցուցանակ, որը նշում է, որ հաճախորդները չեն կարող ուտել կամ խմել ձեռնարկության կամ մոլի տարածքում գտնվող ցանկացած վայրում:**
- Տեղադրվում է ցուցանակ, որը հիշեցնում է ճաշող հանրությանը ռեստորան մուտք գործելիս պահպանել վեց ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն, լվանալ ձեռքերը, կամ օգտագործել ախտահանիչ միջոց և տանը մնալ, եթե նրանք հիվանդ են, կամ ունեն COVID-19-ի ախտանիշներ:
- Հաստատության առցանց վաճառակետերը (կայք, սոցիալական լրատվամիջոցներ և այլն) պետք է հստակ տեղեկատվություն տրամադրեն հաստատության ժամերի, դիմակների օգտագործման անհրաժեշտության, նախնական պատվերի, ամրագրումների, կանխավճարների, տեղափոխման և/կամ առաքման հետ կապված ծրագրերի և այլ կարևոր հարցերի վերաբերյալ:

E. ԿԱՐԵՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆԱՉԱՌ ՀԱՄԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Այն ծառայությունները, որոնք խիստ կարևոր նշանակություն ունեն այցելուների/հաճախորդների համար, պետք է առաջնահերթություն ստանան:

- Գործարքները կամ ծառայությունները, որոնք կարող են առաջարկվել հեռակա կարգով, պետք է տեղափոխվեն առցանց հարթակ:
- Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ՝ ապահովելու ապրանքների և ծառայությունների մատչելիությունը այն հաճախորդների համար, ովքեր ունեն շարժունակության սահմանափակումներ և/կամ բարձր վտանգի են ենթարկվում հանրային տարածքներում:

Վերը չներառված ցանկացած լրացուցիչ միջոցառում պետք է նշվի առանձին էջերի վրա, որոնք ձեռնարկությունը պետք է կցի սույն փաստաթղթին:

Այս Արձանագրության վերաբերյալ ցանկացած հարցերի կամ մեկնաբանությունների դեպքում կարող եք կապ հաստատել հետևյալ անձի հետ.

**Ձեռնարկության
Կոնտակտային Անուն՝**
Հեռախոսահամար՝
**Վերջին Վերանայման
Ամսաթիվը՝**
